Թողարկման 21-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2014

Մարտ

թիվ 3 (187)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, որոշ ՓԲԸ-ների «Սիգ Մանի Տրանսֆեր» և «Ավերս» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև «Սթար Դիվայդ» ՓԲԸ-ին և «Պետրոս-94» ՍՊԸ-ին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Կրպակ» ՍՊԸ-ին և ընկերության թիվ 1, 2, 3 մասնաճյուղերին, «ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ տրամադրելու, «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի «Երևան Մոլ» մասնաճյուղը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 1 արտարժույթի փոխանակման կետի, 3 գրավատների նկատմամբ տուգանք կիրառելու և 5 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 311-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 326-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

63 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 15-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 26-ի թիվ 199-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին»

64 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 17-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 70-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

65 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 18-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 29-ի թիվ 150-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

66 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 19-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի հունիսի 20-ի թիվ 161-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին»

67 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 29-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 366-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

74 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 45-Ն որոշումը «ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ-100», «ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆ-100», «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ-400» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

78 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 47-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի հոկտեմբերի 1-ի թիվ 230-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

79 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 7.5% (որոշում թիվ 58Ա):
- ***«Սիգ Մանի Տրանսֆեր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «ՎՏԲ-Հայաստան բանկ» և «Անելիք բանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 50Ա, 70Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Սթար Դիվայդ» փակ բաժնետիրական և «Պետրոս-94» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 54Ա, 57Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիաներ են տրամադրվել*** «Կրպակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը և ընկերության թիվ 1, 2, 3 մասնաճյուղերին, ինչպես նաև «ՎիէլՎի Սենթր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշումներ թիվ 68Ա, 74Ա):
- ***«Ավերս» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Անելիք բանկ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 69Ա):
- ***Գրանցվել է*** «ԱԿԲԱ-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Երևան Մոլ» մասնաճյուղը (որոշումներ թիվ 1/223Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 արտարժույթի փոխանակման կետի, 3 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 4710000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/209Ա, 1/264Ա, 1267/Ա, 1/269Ա) և 5 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/194Ա, 1/208Ա, 1/222Ա, 1/263Ա, 1/268Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 326-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածի 4-րդ մասը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 326-Ն որոշմամբ հաստատված «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետները և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգում» և հավելվածներում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 31.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները ԱՊՊԱ պայմանագիր կնքելուց առաջ, ինչպես նաև սույն հավելվածի 28-րդ կետով նախատեսված այլ դեպքերում ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ տվյալներ ներկայացնելուց առաջ՝ նախքան ԱՊՊԱ վկայագրի և սույն հավելվածի Հավելված 1-ով սահմանված ՏՄ-ներին և դրանց սեփականատերերին վերաբերող համապատասխան դաշտերը լրացնելը, սույն հավելվածով սահմանված կարգով հարցում են կատարում ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ՝ ճՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից համապատասխան ՏՄ-ի և դրա սեփականատիրոջ վերաբերյալ սույն հավելվածի Հավելված 2-ի Ձև 8-ով սահմանված տեղեկատվությունը ստանալու համար: Հարցման արդյունքում ՏՄ-ի վերաբերյալ ստացված տվյալները ենթակա են ստուգման ապահովագրական ընկերության կողմից ընկերության մոտ առկա ՏՄ-ի համապատասխան փաստաթղթերում ներառված տեղեկատվության հետ□Ընդ որում, սույն կետով սահմանված հարցման կատարման և համապատասխանաբար ԱՊՊԱ պայմանագրի կնքման միջև ընկած ժամանակահատվածը չպետք է գերազանցի մեկ օրացուցային օրը:»:

2) Ուժը կորցրած ճանաչել 31.2-րդ կետը:

3) 31.4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն հավելվածի 31.3-րդ կետով նախատեսված համեմատության արդյունքում տվյալների անհամապատասխանություն չհայտնաբերվելու դեպքում ապահովագրական ընկերության ծրագրային համակարգում ԱՊՊԱ պայմանագրի համապատասխան դաշտերը լրացվում են ԱՊՊԱ տեղեկատվական համակարգից հարցման արդյունքում ստացված տվյալների հիման վրա, սակայն ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ վերադարձնում է միայն ՏՄ-ի նույնականացման համարը:»:

4) 31.5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Սույն հավելվածի 31.3-րդ կետով նախատեսված համեմատության արդյունքում տվյալների անհամապատասխանություն հայտնաբերվելու, ինչպես նաև սույն հավելվածով սահմանված հարցման արդյունքում որևէ տվյալ չստացվելու դեպքում՝ ապահովագրական ընկերությունը ՏՄ-ի տվյալներում կատարում է համապատասխան փոփոխություններ քաղաքացիների կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա և ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ է վերադարձնում ՏՄ-ի նույնականացման համարը և փոփոխված տվյալը:»:

5) 34-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ճՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ՏՄ-ների և ճՏՊ-ների վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ապահովագրական, վերաապահովագրական ընկերություններին՝ համապատասխանաբար ըստ սույն հավելվածի Հավելված 2-ի Ձև 8-ի և Ձև 9-ի, որոնց գաղտնիության պահպանման համար պատասխանատու է վերոնշյալ տվյալները ստացած ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունը:»:

6) Լրացնել 37.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Ապահովագրական ընկերությունը ԱՊՊԱ պայմանագիր կնքելուց առաջ պարտավոր է ԱՊՊԱ տեղեկատվական հարցում կատարել ապահովադրի և լիազորված տիրապետողների վերաբերյալ Բոնուս-Մալուս դասերը ստանալու համար: Հարցման հիման վրա ԱՊՊԱ տեղեկատվական համակարգը հաշվարկում է յուրաքանչյուր անձի վերաբերյալ Բոնուս-Մա-

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. դեկտեմբերի 24-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 26.03.2014 թ. (ՀՀԳՏ N7 (486)[1], 1.04.2014):

լուս դաս՝ նույնականացնելով անձին ապահովագրական ընկերության կողմից ներկայացված անձի նույնականացուցչի (անձը հաստատող փաստաթղթի սերիա և համար և/կամ հանրային ծառայության համարանիշ) միջոցով: Ընդ որում, ապահովագրական ընկերությունը պարտավոր է յուրաքանչյուր ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրական վճարը հաշվարկել ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի կողմից ներկայացված Բոնուս-Մալուս դասի հիման վրա: Բոնուս-Մալուս դասի հաշվարկման մեթոդը սահմանվում է Բյուրոյի համապատասխան կանոններով:»:

7) Լրացնել 42.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ՝ «Սույն կարգով սահմանված կարգով հարցումներն իրականացնելուց հետո ապահովագրական ընկերությունը կազմված ԱՊՊԱ պայմանագիրը ներկայացնում է ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ հաստատման համար: Սույն հավելվածով սահմանված պահանջների ստուգումից և ներկայացված ԱՊՊԱ պայմանագիրը՝ վերջիններին համապատասխանելուց հետո ԱՊՊԱ տեղեկատվական համակարգը հաստատում է ԱՊՊԱ պայմանագիրը՝ ձևավորելով պայմանագրի համապատասխան նույնականացման համար: Ապահովագրական ընկերությունը պարտավոր է հարցման միջոցով ստանալ ձևավորված նույնականացման համարը և արտատպել ԱՊՊԱ պայմանագրի թղթային տարբերակում նախքան պայմանագիրը ապահովադրին տրամադրելը:»:

8) 38-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «ՃՈ տեղեկատվական-փնտրողական և ԱՊՊԱ տեղեկատվական համակարգերի միջև տվյալների փոխանակումն իրականացվում է հարցումների միջոցով:»:

9) 39-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

10) 42-րդ կետում «կնքման պահին» բառերից հետո լրացնել «վեբ-սերվիսի միջոցով:» բառերը:

11) 53-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Ապահովագրական, վերաապահովագրական ընկերությունները ՃՈ տեղեկատվական-փնտրողական համակարգից ստացված ՏՄ-ների և ՃՏՊ-ների վերաբերյալ տվյալները կարող են ստանալ ԱՊՊԱ տեղեկատվական համակարգ ներկայացնելով (հարցում կատարելով) համապատասխան ՏՄ-ի հաշվառման համարանիշը:»:

12) Ուժը կորցրած ճանաչել 53.1-րդ, 54-րդ, 54.1-րդ, 57-րդ կետերը□

13) Հավելվածներ 1-ը, 2-ը և 3-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
28 դեկտեմբերի 2014 թ., N 311-Ն

Հավելված
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 311-Ն որոշման

«Հավելված 1
«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետները և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգը» հավելվածի

ՑԱՆԿ
ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ ՄՈՒՏՔԱԳՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

Գլուխ 1. ԱՊՊԱ պայմանագիր

1. Էլեկտրոնային փաստաթղթի վերաբերյալ հիմնական տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Ապահովագրական ընկերության կոդ	Լրացվում է ապահովագրական ընկերության կոդը:	պարտադիր
2	Մասնաճյուղի կոդ	Լրացվում է ապահովագրական ընկերության մասնաճյուղի կոդը:	առկայության դեպքում՝ պարտադիր
3	Ռեգիստրի կոդ	Լրացվում է ռեգիստրի համապատասխան կոդը	պարտադիր
4	Փաստաթղթի տեսակ	Լրացվում է փաստաթղթի տեսակը՝ *ԱՊՊԱ պայմանագիր:*	պարտադիր
5	Փաստաթղթի փոփոխություն	Արտացոլվում է փաստաթղթի փոփոխությունը (այո կամ ոչ):	պարտադիր
6	Փաստաթղթի կազմման ամսաթիվ	Լրացվում է ներկայացվող փաստաթղթի կազմման ամսաթիվը:	պարտադիր
7	Փաստաթուղթ ուղարկելու ամսաթիվ	Լրացվում է փաստաթուղթ ապահովագրական ռեգիստր ուղարկելու ամսաթիվը:	պարտադիր

2. Պայմանագրի գործողություն

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Պայմանագրի կոդ	Լրացվում է կնքվող պայմանագրի կոդը	պարտադիր
2	Պայմանագրի կնքման ամսաթիվ	Լրացվում է պայմանագրի կնքման ամսաթիվը	պարտադիր
3	Պայմանագրի գործողության մեջ մտնելու օր	Լրացվում է պայմանագրի գործողության մեջ մտնելու օրը/ամիսը/տարեթիվը	պարտադիր
4	Պայմանագրի գործողության մեջ մտնելու ժամ	Լրացվում է պայմանագրի գործողության մեջ մտնելու ժամը	պարտադիր
5	Պայմանագրի գործողության դադարման օր	Լրացվում է պայմանագրի գործողության դադարման օրը/ամիսը/տարեթիվը	պարտադիր
6	Պայմանագրի գործողության դադարման ժամ	Լրացվում է պայմանագրի գործողության դադարման ժամը	պարտադիր

3. Ապահովագրության ընդհանուր տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Պայմանագրի տեսակ	Լրացվում է պայմանագրի տեսակը	պարտադիր
ա.	*Ստանդարտ*		
բ.	*Սահմանային*		
գ.	*Գրիմ քարտ*		
2	Ապահովագրավճարի չափ	Լրացվում է ապահովագրավճարի չափը (ՀՀ դրամ)	պարտադիր
3	Ապահովագրական գումար	Լրացվում է ապահովագրական գումարի չափը (ՀՀ դրամ կամ արտարժույթ)	պարտադիր
ա.	Անձնական վնասների համար՝ ըստ յուրաքանչյուր տուժողի		
բ.	Անձնական վնասների համար՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի		
գ.	Գույքին պատճառված վնասների համար՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի		

4	Պայմանական չհատուցվող գումար (ՀՀ դրամ)	Նշվում է չհատուցվող գումարն արժեքային արտահայտությամբ: Բացակայության դեպքում՝ 0:	պարտադիր
5	Ոչ պայմանական չհատուցվող գումար (ՀՀ դրամ)	Նշվում է չհատուցվող գումարն արժեքային արտահայտությամբ	պարտադիր

Գլուխ 2. Ապահովադիր

4. Ապահովադրի վերաբերյալ ընդհանուր տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Իրավական կարգավիճակ	Լրացվում է ապահովադրի իրավական կարգավիճակը	պարտադիր
ա.	*Ֆիզիկական անձ*		
բ.	*Իրավաբանական անձ*		
գ.	*Հայաստանի Հանրապետություն*		
դ.	*ՀՀ համայնք*		
ե.	*Օտարերկրյա պետություն*		
զ.	*Միջազգային կազմակերպություն*		
2	Ապահովադրի նույնականացուցիչ	Լրացվում է պատահարի մասնակիցների վերաբերյալ մուտքագրված տեղեկատվության նույնականացուցիչը	պարտադիր

Գլուխ 3. ԱՊՊԱ պայմանագրում նշվող տրանսպորտային միջոցները (այսուհետ նաև՝ ՏՄ)

5. Տրանսպորտային միջոցների թիվ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Տրանսպորտային միջոցների թիվ	Ձևավորում է համակարգչային ծրագիրը	

6. Յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի վերաբերյալ տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	ՏՄ նույնացման համար	Լրացվում է ՏՄ-ի ունիկալ նույնականացման համարը	պարտադիր
2	ԱՊՊԱ կտրոնի համար	Լրացվում է ապահովագրական ընկերության (ԱԸ) կողմից տրված ԱՊՊԱ կտրոնի համարը	պարտադիր
3	Ապահովագրավճարի չափ՝ առանձին ՏՄ-ի համար	Լրացվում է ապահովագրավճարի չափը (ՀՀ դրամ)	պարտադիր
4	Ապահովագրական գումար՝ առանձին ՏՄ-ի համար	Լրացվում է տվյալ ՏՄ գծով ապահովագրական գումարը	պարտադիր
ա.	*Անձնական վնասների համար՝ ըստ յուրաքանչյուր տուժողի*		
բ.	*Անձնական վնասների համար՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի*		
գ.	*Գույքին պատճառված վնասների համար՝ ըստ յուրաքանչյուր ապահովագրական պատահարի*		
5	Տրանսպորտային միջոցի սեփա-կանատիրոջ կարգավիճակ	Լրացվում է տրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կարգավիճակը	պարտադիր
ա.	*Ֆիզիկական անձ*		
բ.	*Իրավաբանական անձ*		
գ.	*Հայաստանի Հանրապետություն*		
դ.	*ՀՀ համայնք*		
ե.	*Օտարերկրյա պետություն*		
զ.	*Միջազգային կազմակերպություն*		
6	Տրանսպորտային միջոցի սեփա-կանատիրոջ նույնականացուցիչ	Լրացվում է մասնակիցների վերաբերյալ մուտքագրված տեղեկատվության նույնականացուցիչը	պարտադիր

Գլուխ 4. Ապահովագրված անձանց (լիազորված տիրապետողների՝ ներառյալ ապահովադիրը, եթե վարորդ է) վերաբերյալ տվյալներ

7. Ապահովագրված անձանց թիվը

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Ապահովագրված անձանց թիվ	Ձևավորում է համակարգչային ծրագիրը	

8. Յուրաքանչյուր ապահովագրված անձի վերաբերյալ տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Ապահովագրված անձի նույնականացուցիչ	Լրացվում է մասնակիցների վերաբերյալ մուտքագրված տեղեկատվության նույնականացուցիչը	պարտադիր
2	Իրավական կարգավիճակ	Լրացվում է ապահովադրի իրավական կարգավիճակը	պարտադիր
ա.	*Ֆիզիկական անձ*		
բ.	*Իրավաբանական անձ*		
գ.	*Հայաստանի Հանրապետություն*		
դ.	*ՀՀ համայնք*		
ե.	*Օտարերկրյա պետություն*		
զ.	*Միջազգային կազմակերպություն*		

Գլուխ 5. ԱՊՊԱ պայմանագրերի և ապահովագրական պատահարների և հատուցումների մասնակիցների վերաբերյալ տվյալներ

9. Ֆիզիկական անձ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Մասնակցի նույնականացուցիչ	Լրացվում է ուղարկվող տեղեկատվության շրջանակներում մասնակցի ունիկալ նույնականացուցիչը (օր.՝ 1, 2 և այլն)	պարտադիր
2	Սոցիալական քարտ	Լրացվում է սոցիալական քարտի համարը	առկայության դեպքում՝ պարտադիր
3	Անձը հաստատող փաստաթղթի համար	Լրացվում է Կառավարության 1999 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 767 որոշմամբ հաստատված անձը հաստատող որևէ փաստաթղթի հերթական համարը	պարտադիր
4	Անձը հաստատող փաստաթուղթն ում կողմից է տրվել	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	առկայության դեպքում՝ պարտադիր
5	Անձը հաստատող փաստաթղթի տրման ամսաթիվ	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	առկայության դեպքում՝ պարտադիր
6	Անձը հաստատող փաստաթուղթը մինչև երբ է ուժի մեջ	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	առկայության դեպքում՝ պարտադիր
7	Անուն (հայերեն)	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
8	Հայրանուն (հայերեն)	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	առկայության դեպքում՝ պարտադիր
9	Ազգանուն (հայերեն)	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
10	Անուն (լատինատառ)	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
11	Հայրանուն (լատինատառ)	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	առկայության դեպքում՝ պարտադիր
12	Ազգանուն (լատինատառ)	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
13	Ծննդյան ամսաթիվ	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների նշվում է օր/ամիս/տարի	պարտադիր
14	Սեռ	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
15	Քաղաքացիություն	Ըստ անձը հաստատող փաստաթղթի տվյալների	պարտադիր
16	Բնակության վայր	Լրացվում է փաստացի բնակության վայրը	պարտադիր ՀՀ քաղաքացիների համար
	մարզ		
	համայնք		
	բնակավայր		
	փողոց		
	տուն/շենք		
	բնակարան		

17	Հաշվառման վայր	Լրացվում է պետական հաշվառման վայրը	պարտադիր ՀՀ քաղաքացիների համար
	մարզ		
	համայնք		
	բնակավայր		
	փողոց		
	տուն/շենք		
	բնակարան		
18	Հեռախոսահամար		առկայության դեպքում՝ պարտադիր
19	Վարորդական վկայականի համար	Լրացվում է ըստ վարորդական վկայականի տվյալների	պարտադիր՝ բացառությամբ ապահովագրված անձ չհանդիսացող ապահովադրի և սեփականատիրոջ
20	Վկայականի տրման ամսաթիվ	Լրացվում է ըստ վարորդական վկայականի տվյալների	պարտադիր՝ բացառությամբ ապահովագրված անձ չհանդիսացող ապահովադրի և սեփականատիրոջ
21	Վկայականի ժամկետի ավարտի ամսաթիվ	Լրացվում է ըստ վարորդական վկայականի տվյալների	պարտադիր՝ բացառությամբ ապահովագրված անձ չհանդիսացող ապահովադրի և սեփականատիրոջ
22	Վարորդական իրավունքի կարգ	Լրացվում է ըստ վարորդական վկայականի տվյալների (A, B, C, D, E)	պարտադիր՝ բացառությամբ ապահովագրված անձ չհանդիսացող ապահովադրի և սեփականատիրոջ
23	Վարորդական ստաժ	Ըստ վարորդական վկայականի տվյալների	պարտադիր՝ բացառությամբ ապահովագրված անձ չհանդիսացող ապահովադրի և սեփականատիրոջ
24	Բոնուս-Մալուս դաս	Նշվում է մասնակցին շնորհված Բոնուս-Մալուս դասը: (1)	պարտադիր
25	Ռեզիդենտություն	Լրացվում է ռեզիդենտ է/ոչ ռեզիդենտ է	պարտադիր

10. Իրավաբանական անձ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Մասնակցի նույնականացուցիչ	Լրացվում է ուղարկվող տեղեկատվության շրջանակներում մասնակցի ունիկալ նույնականացուցիչը (օր.՝ 1, 2 և այլն)	պարտադիր
2	Իրավաբանական անձի ՀՎՀՀ	Լրացվում է իրավաբանական անձի ՀՎՀՀ-ն:	պարտադիր
3	Իրավաբանական անձի պետական գրանցման համար	Լրացվում է իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի համարը:	պարտադիր
4	Իրավաբանական անձի անվանում	Լրացվում է իրավաբանական անձի լրիվ անվանումը:	պարտադիր
5	Իրավաբանական անձի կազ-մակերպաիրավական ձև	Լրացվում է իրավաբանական անձի կազմակերպաիրավական ձևը	պարտադիր
ա.	ՍՊԸ		
բ.	ՓԲԸ		
գ.	ԲԲԸ		
դ.	Կոոպերատիվ		
ե.	Հասարակական միավորում		
զ.	Հիմնադրամ		
է.	Իրավաբանական անձանց միություն		
ը.	Այլ		

6	Իրավաբանական անձի գրանցման երկիր	Լրացվում է գրանցման երկիրը	պարտադիր
7	Իրավաբանական անձի գրանցման վայր	Լրացվում է իրավաբանական անձի գլխամասային գրասենյակի գրանցման վայրը	պարտադիր ՀՀ գրանցվածների համար
	մարզ		
	համայնք		
	բնակավայր		
	փողոց		
	տուն/շենք		
	բնակարան		
8	Իրավաբանական անձի գործունեության իրականացման վայր	Լրացվում է իրավաբանական անձի գլխամասային գրասենյակի գործունեություն ծավալելու վայրը	պարտադիր ՀՀ գրանցվածների համար
	մարզ		
	համայնք		
	բնակավայր		
	փողոց		
	տուն/շենք		
	բնակարան		
9	Բոնուս-Մալուս դաս	Նշվում է մասնակցին շնորհված Բոնուս-Մալուս դասը (1)	պարտադիր
10	Ռեզիդենտություն	Լրացվում է ռեզիդենտ է/ոչ ռեզիդենտ է	պարտադիր

11. Հայաստանի Հանրապետություն

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Մասնակցի նույնականացուցիչ	Լրացվում է ուղարկվող տեղեկատվության շրջանակներում մասնակցի ունիկալ նույնականացուցիչը (օր.՝ 1, 2 և այլն)	պարտադիր
2	Պետության անունից հանդես եկող մարմին	Լրացվում է մարմնի անվանումը	պարտադիր
3	Պետության անունից հանդես եկող մարմնի գործունեության վայր	Լրացվում է համապատասխան մարմնի գործունեության վայրը	պարտադիր
	մարզ		
	համայնք		
	բնակավայր		
	փողոց		
	տուն/շենք		
	բնակարան		
4	Բոնուս-Մալուս դաս	Նշվում է մասնակցին շնորհված Բոնուս-Մալուս դասը (1)	պարտադիր

12. Օտարերկրյա պետություն

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Մասնակցի նույնականացուցիչ	Լրացվում է ուղարկվող տեղեկատվության շրջանակներում մասնակցի ունիկալ նույնականացուցիչը (օր.՝ 1, 2 և այլն)	պարտադիր
2	Երկիր	Նշվում է երկրի անունը	պարտադիր
3	Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի անվանում	Լրացվում է օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի անվանումը	պարտադիր
ա.	Դեսպանատուն		
բ.	Հյուպատոսարան		
գ.	Այլ		
4	Օտարերկրյա պետության անունից հանդես եկող մարմնի գործունեության իրականացման վայր	Լրացվում է համապատասխան մարմնի գործունեության վայրը	պարտադիր
	մարզ		
	համայնք		
	բնակավայր		
	փողոց		
	տուն/շենք		
	բնակարան		
5	Բոնուս-Մալուս դաս	Նշվում է մասնակցին շնորհված Բոնուս-Մալուս դասը (1)	պարտադիր

13. Համայնք

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Մասնակցի նույնականացուցիչ	Լրացվում է ուղարկվող տեղեկատվության շրջանակներում մասնակցի ունիկալ նույնականացուցիչը (օր.՝ 1, 2 և այլն)	պարտադիր
2	Համայնքի անվանում	Նշվում է համայնքի անվանումը	պարտադիր
3	Համայնքի անունից հանդես եկող մարմնի անվանում	Լրացվում է համայնքի անունից հանդես եկող մարմնի անվանումը	պարտադիր
ա.	*Քաղաքապետարան*		
բ.	*Գյուղապետարան*		
գ.	*Թաղապետարան*		
դ.	*Այլ կազմակերպություն*		
4	Համայնքի անունից հանդես եկող մարմնի գործունեության վայր	Լրացվում է համայնքի անունից հանդես եկող մարմնի գործունեության վայրը	պարտադիր
	մարզ		
	համայնք		
	բնակավայր		
	փողոց		
	տուն/շենք		
	բնակարան		
5	Բոնուս-Մալուս դաս	Նշվում է շնորհված Բոնուս-Մալուս դասը (1)	պարտադիր

14. Միջազգային կազմակերպություն

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Մասնակցի նույնականացուցիչ	Լրացվում է ուղարկվող տեղեկատվության շրջանակներում մասնակցի ունիկալ նույնականացուցիչը (օր.՝ 1, 2 և այլն)	պարտադիր
2	Միջազգային կազմակերպության անվանում	Լրացվում է միջազգային կազմակերպության անվանումը	պարտադիր
3	Միջազգային կազմակերպության գործունեության իրականացման վայր	Լրացվում է կազմակերպության գործունեության վայրը	պարտադիր
	մարզ		
	համայնք		
	բնակավայր		
	փողոց		
	տուն/շենք		
	բնակարան		
4	Բոնուս-Մալուս դաս	Նշվում է շնորհված Բոնուս-Մալուս դասը (1)	պարտադիր

Գլուխ 6. ԱՊՊԱ պայմանագրով ապահովագրվող և պատահարի մասնակից ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ տվյալներ

15. Տրանսպորտային միջոցի (այսուհետ՝ ՏՄ) վերաբերյալ տվյալներ[1]

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Պետական հաշվառման համարանիշ՝ 1	Նշվում է ՏՄ-ի պետհամարանիշը (առանց բացատների)	պարտադիր
2	Պետական հաշվառման համարանիշ՝ 2	Նշվում է ՏՄ-ի 2-րդ պետհամարանիշը, օրինակ՝ Տաքսի ծառայությունների ՏՄ-ների դեղին գույնով համարները (առանց բացատների)	առկայության դեպքում՝ պարտադիր
3	Տրանսպորտային միջոցի փաստաթղթի առկայություն	Լրացվում է տրանսպորտային միջոցի փաստաթղթի առկայությունը (այո/ոչ)	պարտադիր
4	ՏՄ-ի հաշվառման վկայագիր	Նշվում է ՏՄ-ի գրանցման վկայագրի համարը	առկայության դեպքում՝ պարտադիր
5	Վկայագրի տրամադրման ամսաթիվ	Լրացվում է օր/ամիս/տարի	առկայության դեպքում՝ պարտադիր
6	Ում կողմից	Ըստ ՏՄ-ի գրանցման վկայագրի կամ ժամանակավոր վկայագրի տվյալների	առկայության դեպքում՝ պարտադիր

[1] *Մեկ պայմանագրով հնարավոր է ապահովագրել միայն մի քանի ՏՄ-ներ, որոնց կարող են կցվել մեկից ավելի լիազորված վարորդներ (տիրապետողներ):*

7	ՏՄ-ի տեսակ	Լրացվում է ՏՄ-ի տեսակը՝ համաձայն ՏՄ-ի գրանցման վկայագրի (օր.՝ մարդատար, բեռնատար և այլն)	պարտադիր
ա.	*Մարդատար*		
բ.	*Միկրոավտոբուս*		
գ.	*Բեռնատար/մինչև 80 ձիաուժ շարժիչի հզորությամբ*		
դ.	*Բեռնատար/81 և ավելի ձիաուժ շարժիչի հզորությամբ*		
ե.	*Ավտոբուս*		
զ.	*Տրոլեյբուս*		
է.	*Մոտոտրանսպորտ*		
ը.	*Այլ/տրակտոր և այլն*		
8	ՏՄ-ի մակնիշի ընտանիք	Լրացվում է լատինատառ ՏՄ-ի մակնիշի ընտանիքը՝ համաձայն ՏՄ-ի գրանցման վկայագրի (օր.՝ BMW և այլն)	պարտադիր
9	ՏՄ-ի մակնիշի կոդ	Լրացվում է լատինատառ ՏՄ-ի մակնիշի կոդը՝ համաձայն ՏՄ-ի գրանցման վկայագրի (օր.՝ BMW-X5-4.4L և այլն)	պարտադիր
10	Թափքի տեսակ	Լրացվում է ՏՄ-ի թափքի տեսակը՝ ըստ ՏՄ-ի գրանցման վկայագրի կամ ժամանակավոր վկայագրի տվյալների	պարտադիր
11	Թափքի համար	Լրացվում է ՏՄ-ի թափքի համարը	առկայության դեպքում՝ պարտադիր (պարտադիր պետք է լրացվի կամ թափքի համարը կամ VIN համարը կամ հենասարքի համարը կամ շարժիչի համարը)
12	VIN (ՎիԱյԷն) համար	Լրացվում է ՏՄ-ի VIN համարը	առկայության դեպքում՝ պարտադիր (պարտադիր պետք է լրացվի կամ թափքի համարը կամ VIN համարը կամ հենասարքի համարը կամ շարժիչի համարը)
13	Թողարկման տարի	Նշվում է ՏՄ-ի թողարկման տարեթիվը	պարտադիր
14	Հենասարքի համար	Լրացվում է ՏՄ-ի հենասարքի համարը	առկայության դեպքում՝ պարտադիր (պարտադիր պետք է լրացվի կամ թափքի համարը կամ VIN համարը կամ հենասարքի համարը կամ շարժիչի համարը)
15	Շարժիչի համար	Լրացվում է ՏՄ-ի շարժիչի համարը	առկայության դեպքում՝ պարտադիր (պարտադիր պետք է լրացվի կամ թափքի համարը կամ VIN համարը կամ հենասարքի համարը կամ շարժիչի համարը)
16	Շարժիչի հզորություն	Լրացվում է ՏՄ-ի շարժիչի հզորությունը	պարտադիր
17	Գույնի ընտանիք	Լրացվում է ՏՄ-ի գույնի ընտանիքը	պարտադիր
18	Գույնի երանգի կոդ	Լրացվում է ՏՄ-ի գույնի երանգի կոդը	պարտադիր
19	ՏՄ սեփականատերերի քանակ	Լրացվում է 1, 2 և այլն	պարտադիր
20	ՏՄ-ի օգտագործման ձև	Լրացվում է ՏՄ-ի օգտագործման ձևը	պարտադիր
ա.	*Անձնական*		
բ.	*Ծառայողական*		
գ.	*Տաքսի*		
դ.	*Հանրային տրանսպորտ*		
ե.	*Առևտրային օգտագործում*		
զ.	*Այլ*		

21	ՏՄ-ի օգտագործման հիմնական մարզ	Լրացվում է ՏՄ-ի օգտագործման հիմնական մարզը՝ ըստ ապահովադրից ստացված տեղեկատվության, հակառակ դեպքում՝ ըստ ՏՄ-ի գրանցման վկայագրի տվյալների	պարտադիր
22	ՏՄ-ի օգտագործման հիմնական վայր	Լրացվում է ՏՄ-ի օգտագործման հիմնական վայրը/շրջանը՝ ըստ ապահովադրից ստացված տեղեկատվության, հակառակ դեպքում՝ ըստ ՏՄ-ի գրանցման վկայագրի տվյալների (Երևան կամ մարզ): Եթե մարզ, ապա գյուղական կամ քաղաքային:	պարտադիր
ա.	*գյուղական*		
բ.	*քաղաքային*		
23	Կցորդի առկայություն		պարտադիր
	Առանց կցորդի		
	Կցորդի առկայությամբ		
24	Հաշվիչի տվյալ	Նշվում է տվյալ պահին հաշվիչի տվյալը (կմ)	պարտադիր

Գլուխ 7. Ապահովագրական պատահարի վերաբերյալ ծանուցում

16. Էլեկտրոնային փաստաթղթի վերաբերյալ հիմնական տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Ապահովագրական ընկերության կոդ	Լրացվում է ապահովագրական ընկերության կոդը	պարտադիր
2	Մասնաճյուղի կոդ	Լրացվում է մասնաճյուղի կոդը	առկայության դեպքում՝ պարտադիր
3	Ռեգիստրի կոդ	Լրացվում է ռեգիստրի համապատասխան կոդը	պարտադիր
4	Փաստաթղթի տեսակ	Ապահովագրական պատահարի մասին ծանուցում	պարտադիր
5	Փաստաթղթի փոփոխություն	Արտացոլվում է փաստաթղթի փոփոխությունը (այո կամ ոչ)	պարտադիր
6	Փաստաթղթի կազմման ամսաթիվ	Լրացվում է ներկայացվող փաստաթղթի կազմման ամսաթիվը	պարտադիր
7	Փաստաթուղթն ուղարկելու ամսաթիվ	Լրացվում է փաստաթուղթը ռեգիստր ուղարկելու ամսաթիվը	պարտադիր

17. Ապահովագրական պատահարի ծանուցման վերաբերյալ տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Պայմանագրի համար	Լրացվում է ապահովագրական ծանուցումն իրականացնող ապահովադրի պայմանագրի համարը	պարտադիր
2	Ապահովագրական պատահարի ծանուցման համար	Լրացվում է ապահովագրական պատահարի ծանուցման համարը, ընդ որում, ապահովագրական պատահարի ծանուցման համարները չեն կարող կրկնվել	պարտադիր
3	Ապահովագրական պատահարի վերաբերյալ ծանուցում	Լրացվում է ապահովագրական պատահարի վերաբերյալ ծանուցման ձևը	պարտադիր
ա.	*Հեռախոսազանգ*		
բ.	*Դիմում*		
գ.	*Փոստային հաղորդագրություն*		
դ.	*Այլ*		
4	Ապահովագրական պատահարի վերաբերյալ ծանուցման ամսաթիվ	Լրացվում է ապահովագրական պատահարի վերաբերյալ ծանուցման ամսաթիվը	պարտադիր
5	Ապահովագրական պատահարի վերաբերյալ ծանուցման ժամ	Լրացվում է ապահովագրական պատահարի վերաբերյալ ծանուցման ժամը	պարտադիր

Գլուխ 8. Ապահովագրական պատահարի վերաբերյալ տվյալներ

18. Էլեկտրոնային փաստաթղթի վերաբերյալ հիմնական տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Ապահովագրական ընկերության կոդ	Լրացվում է ապահովագրական ընկերության կոդը	պարտադիր
2	Մասնաճյուղի կոդ	Լրացվում է մասնաճյուղի կոդը	առկայության դեպքում՝ պարտադիր
3	Ռեգիստրի կոդ	Լրացվում է ռեգիստրի համապատասխան կոդը	պարտադիր
4	Փաստաթղթի տեսակ	Ապահովագրական պատահար	պարտադիր
5	Փաստաթղթի փոփոխություն	Արտացոլվում է փաստաթղթի փոփոխությունը (այո կամ ոչ)	պարտադիր
6	Փաստաթղթի կազմման ամսաթիվ	Լրացվում է ներկայացվող փաստաթղթի կազմման ամսաթիվը	պարտադիր
7	Փաստաթուղթն ուղարկելու ամսաթիվ	Լրացվում է փաստաթուղթը ռեգիստր ուղարկելու ամսաթիվը	պարտադիր

19. Ապահովագրական պատահարի վերաբերյալ ընդհանուր տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Պայմանագրի համար	Լրացվում է ապահովագրական պատահարի մասնակից ապահովադրի պայմանագրի համարը	պարտադիր
2	Ապահովագրական պատահարի ծանուցման համար	Լրացվում է համապատասխան ծանուցման համարը	պարտադիր
3	Ապահովագրական պատահարի համար	Լրացվում է ապահովագրական պատահարի համարը, ընդ որում, ապահովագրական պատահարների համարները չեն կարող կրկնվել	պարտադիր
4	Ապահովագրական պատահարի ամսաթիվ	Լրացվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու օրը/ամիսը/տարին	պարտադիր
5	Ապահովագրական պատահարի ժամ	Լրացվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու ժամը	պարտադիր
6	Ապահովագրական պատահարի շաբաթվա օր	Լրացվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու շաբաթվա օրը	պարտադիր
7	Ապահովագրական պատահարի երկիր	Լրացվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու երկրի անունը	պարտադիր
8	Ապահովագրական պատահարի տեղի ունենալու մարզ	Լրացվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու մարզի անունը	պարտադիր ՀՀ համար
9	Ապահովագրական պատահարի համայնք	Լրացվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու համայնքի անունը	պարտադիր ՀՀ համար
10	Ապահովագրական պատահարի վայր կամ տեղանք	Լրացվում է ապահովագրական պատահարի տեղի ունենալու վայրը: Տրվում է տեղանքի նկարագիր՝ կոնկրետ վայրի բացակայության դեպքում:	պարտադիր ՀՀ համար
11	Ապահովագրական պատահարը հիմնավորող փաստաթուղթ	Նշվում է ապահովագրական պատահարի գրանցման և հա-տուցման հիմք հանդիսացող փաստաթղթի անվանումը	պարտադիր
ա.	*Համաձայնեցված հայտարարագիր*		
բ.	*Ճանապարհային ոստիկանության կողմից տրամադրված դեպքի գրանցման ակտ*		
գ.	*Այլ*		
12	Ապահովագրական պատահարը հիմնավորող փաստաթղթի համար	Նշվում է 11-րդ տողում նշված փաստաթղթի հերթական համարը	պարտադիր

20. Ապահովագրական պատահարի նկարագրությունը

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Ապահովագրական պատահարի տեսակ	Հնարավոր է ապահովագրական պատահարի մի քանի տեսակների համակցում	պարտադիր
ա.	*Ճանապարհատրանսպորտային պատահար (այսուհետ՝ ՃՏՊ)*		
բ.	*Այլ ապահովագրական պատահար (բացառությամբ՝ ՃՏՊ-ի)*		

21. Ճանապարհատրանսպորտային պատահար (ՃՏՊ)

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	ՃՏՊ-ի տեսակ	Հնարավոր է ՃՏՊ-ի մի քանի տարատեսակների համակցում	պարտադիր
ա.	*բախում*		
աա.	*առջևից*		
աբ.	*հետևից*		
ագ.	*90 աստիճանի անկյան տակ*		
ադ.	*կողային*		
աե.	*չկա*		
բ.	*շրջում*		
գ.	*խոչընդոտի վրաերթ*		
	հետիոտնի վրաերթ		
դ.	*կանգնած տրանսպորտային միջոցի վրաերթ*		
ե.	*լծկան տրանսպորտային միջոցի վրաերթ*		
զ.	*կենդանու վրաերթ*		
է.	*այլ պատահար*		

2	ՃՏՊ-ի առաջացմանը նպաստող պայմաններ	Լրացվում են ՃՏՊ-ի առաջացմանը նպաստող պայմանները	պարտադիր
ա.	*սառցակալած ծածկ*		
բ.	*ծածկի բարձր սահելիություն*		
գ.	*անհարթ ծածկ*		
դ.	*կողնակի անբավարար վիճակ*		
ե.	*կամրջին հարակից ճեղ երթևեկելի մաս*		
զ.	*կամրջի տակով անցնող ճեղ երթևեկելի մաս*		
է.	*ե/գ գծանցի անբավարար վիճակ*		
ը.	*անբավարար տեսանելիություն*		
թ.	*անբավարար լուսավորություն*		
ժ.	*ծառեր, սյուներ և այլն*		
ժա.	*պաշտպանիչ հարմարանքների բացակայություն*		
ժբ.	*ճանապարհային նշանների թերություններ*		
ժգ.	*լուսացույցի թերություններ*		
ժդ.	*գծանշման թերություններ*		
ժե.	*աշխատանքներ երթևեկելի մասում*		
ժզ.	*այլ պայմաններ*		
ժէ.	*չկա*		
3	Իրավախախտումը վարորդի կողմից	Լրացվում է իրավախախտումը վարորդի կողմից	պարտադիր
ա.	*ոչ սթափ վիճակում վարելը*		
բ.	*արագությունը գերազանցելը*		
գ.	*նշանների և գծանշումների պահանջները չկատարելը*		
դ.	*մարդկանց փոխադրման կանոնները խախտելը*		
ե.	*շարքերի վերադասավորման կանոնները խախտելը*		
զ.	*հետիոտնային անցումների անցման կանոնները խախտելը*		
է.	*ընդհանուր օգտագործման ՏՄ-ի կանգառի անցման կանոնները խախտելը*		
ը.	*լուսային սարքերից օգտվելու կանոնները խախտելը*		
թ.	*առաջինն անցնելու իրավունքի կանոնները խախտելը*		
ժ.	*կանգառի և կայանման կանոնները խախտելը*		
ժա.	*երկաթուղային գծանցների անցման կանոնները խախտելը*		
ժբ.	*բեռների փոխադրման կանոնները խախտելը*		
ժգ.	*քարշարկման կանոնները խախտելը*		
ժդ.	*վազանցի կանոնները խախտելը*		
ժե.	*խաչմերուկի անցման կանոնները խախտելը*		
ժզ.	*ՏՄ-ների միջև տարածության պահպանման կանոնները խախտելը*		
ժէ.	*ՏՄ-ի անսարքությունը*		
ժը.	*ղեկին քնելը*		
ժթ.	*այլ խախտումներ*		
ի.	*չկա*		
իա.	*անհայտ է*		

4	Ավտոտրանսպորտային միջոցի անսարքություն	Լրացվում է ավտոտրանսպորտային միջոցի անսարքության պատճառը	պարտադիր
ա.	*արգելակման համակարգի*		
բ.	*ղեկի կառավարման*		
գ.	*անիվների*		
դ.	*անվադողերի*		
ե.	*լուսավորության*		
զ.	*կցորդման*		
է.	*բեռի*		
ը.	*գործարանային*		
թ.	*չկա*		
ժ.	*անհայտ է*		
5	Լուսային պայմաններ	Լրացվում է տեղեկատվություն լուսային պայմանների վերաբերյալ, երբ տեղի է ունեցել ապահովագրական պատահարը	պարտադիր
ա.	*բնական լուսավորվածությամբ*		
բ.	*գիշերը՝ արհեստական լուսավորվածությամբ*		
գ.	*գիշերը՝ առանց արհեստական լուսավորվածության*		
դ.	*լուսավորվածությունը միացված չէ*		
6	Եղանակ	Լրացվում է տեղեկատվություն եղանակային պայմանների վերաբերյալ, երբ տեղի է ունեցել ապահովագրական պատահարը	պարտադիր
ա.	*պարզ*		
բ.	*մառախուղ*		
գ.	*քամի*		
դ.	*անձրև*		
ե.	*ձյուն*		
7	Ավտոտրանսպորտային միջոցի մանևր	Լրացվում է ապահովագրական պատահարի ժամանակ ավտոտրանսպորտային միջոցի մանևրը	պարտադիր
ա.	*երթևեկությունը սկսելը*		
բ.	*առաջ ընթանալը*		
գ.	*հետ ընթանալը*		
դ.	*հետադարձ կատարելը*		
ե.	*աջ շրջադարձ կատարելը*		
զ.	*ձախ շրջադարձ կատարելը*		
է.	*վազանց կատարելը*		
ը.	*շարքերի վերադասավորում կատարելը*		
թ.	*ճանապարհից դուրս գալը*		
ժ.	*հոսքից հեռանալը*		
ժա.	*հոսքի մեջ մուտք գործելը*		
ժբ.	*կանգառ կատարելը*		
ժգ.	*կայանված*		
ժդ.	*սպասող*		
ժե.	*այլ*		
ժզ.	*անհայտ է*		

22. Ճանապարհի նկարագրությունը, որտեղ տեղի է ունեցել ՃՏՊ-ն

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Բաժանարար գոտի	Լրացվում է առկա է/առկա չէ	պարտադիր
2	Երթևեկություն	Լրացվում է երթևեկության տիպը	պարտադիր
ա.	*միակողմանի*		
բ.	*երկկողմանի*		
3	Երթևեկության կարգավորում	Լրացվում է երթևեկության կարգավորման ձևը	պարտադիր
ա.	*բացակայում է*		
բ.	*հորիզոնական գծանշումով*		
գ.	*հետիոտնային անցում*		
դ.	*լուսացույցով*		
ե.	*տեսուչի վերահսկողությամբ*		
զ.	*լուսացույցը չի աշխատում*		
է.	*«Ձիջեք ճանապարհը» նշանով*		

4	Ճանապարհի երկրաչափություն	Լրացվում է ճանապարհի երկրաչափությունը	պարտադիր
ա.	*ուղիղ և հարթ*		
բ.	*միայն շրջադարձեր*		
գ.	*միայն բարձունք*		
դ.	*շրջադարձեր և բարձունք*		
ե.	*կամուրջ*		
զ.	*լիցք>3մ*		
5	Ծածկի տեսակ	Լրացվում է ճանապարհի ծածկի տեսակը	պարտադիր
ա.	*ասֆալտբետոնե*		
բ.	*կոպճային*		
գ.	*հողային*		
6	Երթևեկելի մասի վիճակ	Լրացվում է ճանապարհի երթևեկելի մասի վիճակը	պարտադիր
ա.	*չոր*		
բ.	*թաց*		
գ.	*ծյունածածկ*		
դ.	*սառցակալած*		
7	Ճանապարհի տեսակ	Լրացվում է ճանապարհի տեսակը	պարտադիր
ա.	*միջպետական*		
բ.	*հանրապետական*		
գ.	*տեղական*		
դ.	*փողոց*		
ե.	*այլ*		

23. Այլ ապահովագրական պատահար (բացառությամբ՝ ճՏՊ-ի)

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Այլ ապահովագրական պատահարի նկարագրություն	Լրացվում է այլ ապահովագրական պատահարի նկարագրությունը	առկայության դեպքում՝ պարտադիր

24. Ապահովագրական պատահարի վնաս

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Վնասի փաստացի չափ (ՀՀ դրամ)	Լրացվում է ապահովագրական պատահարի արդյունքում ստացված վնասի փաստացի (ոչնչով չճշգրտված) չափը	պարտադիր
2	Վնասի՝ հատուցման ենթակա չափ (ՀՀ դրամ)	Լրացվում է ապահովագրական պատահարի արդյունքում ստացված վնասի՝ հատուցման ենթակա չափը (ճշգրտված ապահովագրական գումարով և չհատուցվող գումարով)	պարտադիր
3	Չհատուցվող գումար	Չհատուցվող գումարի առկայություն՝ այո/ոչ	պարտադիր
4	Պայմանական չհատուցվող գումար (ՀՀ դրամ)	Նշվում է չհատուցվող գումարն արժեքային արտահայտությամբ	
5	Ոչ պայմանական չհատուցվող գումար (ՀՀ դրամ)	Նշվում է չհատուցվող գումարն արժեքային արտահայտությամբ	
6	Վնասի բնույթ	Հնարավոր է մի քանի բնույթի վնասների համակցում	պարտադիր
ա.	*անձնական վնաս*		
բ.	*ՏՄ-ի (այդ թվում՝ ՏՄ-ի մասերի և ՏՄ-ում տեղադրված տեխնիկայի) վնասվածք*		
գ.	*գույքային վնաս*		

25. Ապահովագրական պատահարի մասնակից վարորդի վերաբերյալ տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Վարորդի նույնականացուցիչ	Լրացվում է մասնակիցների վերաբերյալ մուտքագրված տեղեկատվության նույնականացուցիչը	պարտադիր
2	Որակավորում		պարտադիր
ա.	*համապատասխան*		
բ.	*ոչ համապատասխան*		
գ.	*անհայտ է*		

3	Անվտանգության գոտի		պարտադիր
ա.	*ամրացված է, օգտագործվում է*		
բ.	*ամրացված է, չի օգտագործվում*		
գ.	*ամրացված չէ*		
դ.	*անհայտ է*		
4	Փախուստ ճՏՊ-ի վայրից		պարտադիր
ա.	*չի դիմել փախուստի*		
բ.	*դիմել է փախուստի, բայց հայտնաբերվել է*		
գ.	*դիմել է փախուստի և չի հայտնաբերվել*		
5	Վարորդի մեղավորությունը	Լրացվում է այո կամ ոչ	պարտադիր

26. Տուժած անձանց վերաբերյալ տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Տուժած անձի իրավական կարգավիճակ	Տուժած անձի իրավական կարգավիճակը	պարտադիր
ա.	*ֆիզիկական անձ*		
բ.	*իրավաբանական անձ*		
գ.	*Հայաստանի Հանրապետություն*		
դ.	*ՀՀ համայնք*		
ե.	*օտարերկրյա պետություն*		
զ.	*միջազգային կազմակերպություն*		
2	Տուժած անձի նույնականացուցիչ	Լրացվում է մասնակիցների վերաբերյալ մուտքագրված տեղեկատվության նույնականացուցիչը	պարտադիր
3	Տուժած անձին պատճառված վնասի փաստացի չափը (ՀՀ դրամ)	Լրացվում է ապահովագրական պատահարի արդյունքում տուժած անձին պատճառված վնասի փաստացի (ոչնչով չճշգրտված) չափը	պարտադիր
4	Վնասի հատուցման ենթակա չափը (ՀՀ դրամ)	Լրացվում է ապահովագրական պատահարի արդյունքում տուժած անձին պատճառված վնասի՝ հատուցման ենթակա չափը (ճշգրտված ապահովագրական գումարով և չհատուցվող գումարով)	պարտադիր

Գլուխ 9. Հատուցման վերաբերյալ տվյալներ

27. Էլեկտրոնային փաստաթղթի վերաբերյալ հիմնական տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Ապահովագրական ընկերության կոդ	Լրացվում է ապահովագրական ընկերության կոդը	պարտադիր
2	Մասնաճյուղի կոդ	Լրացվում է մասնաճյուղի կոդը	առկայության դեպքում՝ պարտադիր
3	Ռեգիստրի կոդ	Լրացվում է ռեգիստրի համապատասխան կոդը	պարտադիր
4	Փաստաթղթի տեսակ	Լրացվում է «Հատուցում»	պարտադիր
5	Փաստաթղթի փոփոխություն	Արտացոլվում է փաստաթղթի փոփոխությունը (այո կամ ոչ)	պարտադիր
6	Փաստաթղթի կազմման ամսաթիվ	Լրացվում է ներկայացվող փաստաթղթի կազմման ամսաթիվը	պարտադիր
7	Փաստաթուղթն ուղարկելու ամսաթիվ	Լրացվում է փաստաթուղթը ռեգիստր ուղարկելու ամսաթիվը	պարտադիր

28. Հատուցման վերաբերյալ ընդհանուր տվյալներ

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Պայմանագրի համար	Լրացվում է ապահովագրական պատահարի մասնակից ապահովադրի պայմանագրի համարը	պարտադիր
2	Ապահովագրական պատահարի վերաբերյալ ծանուցման համար	Լրացվում է ապահովագրական պատահարի վերաբերյալ ծանուցման համարը	պարտադիր

3	Ապահովագրական պատահարի համար	Լրացվում է ապահովագրական պատահարի համարը	պարտադիր
4	Ապահովագրական հատուցման համար	Լրացվում է ապահովագրական հատուցման համարը. ապահովագրական ընկերությունը համարակալում է հատուցումները, ընդ որում՝ հատուցումների համարները չեն կարող կրկնվել	պարտադիր
5	Ապահովագրական հատուցման ամսաթիվ	Լրացվում է ապահովագրական հատուցման ամսաթիվը	պարտադիր
6	Հատուցման հիմքը հանդիսացող փաստաթղթի համար	Նշվում է ապահովագրական պատահարի գրանցման և հատուցման հիմք հանդիսացող փաստաթղթի՝ համաձայնեցված հայտարարագրի, Ոստիկանության կողմից տրամադրված դեպքի գրանցման ակտի կամ այլ փաստաթղթի հերթական համարը	պարտադիր

29. Հատուցման (հատուցումների) չափը

	Տվյալներ	Նկարագրություն	Բնութագիր
1	Տուժած անձի նույնականացուցիչ	Լրացվում է գլուխ 5-ում նշված մասնակիցների վերաբերյալ մուտքագրված տեղեկատվության նույնականացուցիչը	
2	Հատուցված գումարի չափ (ՀՀ դրամ)	Վճարված հատուցման չափը: Վնասի վերականգնման դեպքում նշում են վերականգնման ծախսերը, վնասի հատուցման դեպքում՝ հատուցվող գումարի չափը	պարտադիր
	Այդ թվում՝		
ա.	անձնական վնաս, որից՝	Լրացվում է անձնական վնասի ընդհանուր չափը և նրա առանձին տեսակների գծով (ա-ի) հաշվարկված վնասի չափը: Հնարավոր է մի քանի տարբերակների համակցում:	պարտադիր
աա.	*ամբուլատոր առաջնային բուժօգնություն*		
աբ.	*հիվանդանոցային բուժօգնություն*		
	որից՝		
աբ1	*մետաղական կոնստրուկցիաների կիրառում*		
աբ2	*վճարովի հիվանդասենյակ*		
ագ.	*ամբուլատոր-ռեաբիլիտացիոն բուժօգնություն*		
	որից՝		
ագ1	*վերականգնողական միջոցառումներ*		
ագ2	*դեղորայքի ձեռքբերում*		
ագ3	*մասնագիտացված տնային խնամք*		
ագ4	*ախտորոշիչ-ամբուլատոր միջոցառումներ*		
ագ5	*սանատոր-կուրորտային բուժում*		
ագ6	*անվասայլակի ձեռքբերում*		
ագ7	*տեխնիկական այլ միջոցների և բուժ. պարագաների ձեռքբերում*		
ագ8	*պրոթեզավորում*		
ադ.	*առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած աշխատավարձ (եկամուտ)*		
ադ1	*ժամանակավոր անաշխատունակություն*		
ադ2	*մշտական անաշխատունակություն*		
աե.	*մահ*		
աե1	*հուղարկավորության հետ կապված ծախսեր*		
աե2	*կերակրողին կորցնելու հետ կապված ծախսեր*		
բ.	Գույքին պատճառված վնաս		
բա.	*ՏՄ-ի (այդ թվում՝ ՏՄ-ի մասերի և ՏՄ-ում տեղադրված տեխնիկայի) վնաս, որից.*	Լրացվում է ՏՄ-ի վնասը և նրա առանձին տեսակների գծով հաշվարկված վնասի չափը: Հնարավոր է մի քանի տարբերակների համակցում հետևյալ կերպ՝ ա և գ, ա և դ, բ և գ, բ և դ:	պարտադիր

բա1	*վերականգնվող*		
բա2	*չվերականգնվող*		
բա3	*վերամշակում*		
բա4	*դրամական փոխհատուցում*		
գ.	Այլ գույքային վնաս, որից.	Լրացվում է գույքային վնասի և նրա առանձին տեսակների գծով հաշվարկված վնասի չափը	պարտադիր
գա.	*այլ գույքին հասցված վնաս*		
գբ.	*ճանապարհին հասցված վնաս (այդ թվում՝ երթևեկության նշաններին, լուսանշաններին, սյուներին)*		
գդ.	*շինություններին հասցված վնաս*		
3	Ախտորոշում	Ամբուլատոր առաջնային բուժօգնության դեպքում (2.1-ի ա) լրացվում է ախտորոշումը, որի համար ցուցաբերվել է ամբուլատոր առաջնային բուժօգնություն՝ համաձայն ամբուլատոր քարտի քաղվածքի: Հիվանդանոցային բուժօգնության դեպքում (2.1-ի բ) լրացվում են «Հիմնական կլինիկական եզրափակիչ ախտորոշումը», «Ուղեկցող հիվանդությունները», «Բարդությունները» ՀՀ առողջապահության նախարարի 2011 թ. հունվարի 24-ի թիվ 63-Ա հրամանով հաստատված հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման 0001 ձևի հիման վրա: Ամբուլատոր-ռեաբիլիտացիոն բուժօգնության դեպքում (2.1-ի գ) լրացվում է ախտորոշումը, որի համար նշանակվել է ամբուլատոր-ռեաբիլիտացիոն բուժում՝ համաձայն ամբուլատոր քարտի քաղվածքի և/կամ հիվանդության պատմության քաղվածքի: Յուրաքանչյուր տեղեկատվության խումբ տարանջատել վերնագրերով. օրինակ՝ «Հիմնական կլինիկական եզրափակիչ ախտորոշումը» (տեքստ) «Բարդությունները» (տեքստ) և այլն:	անձնական վնասի դեպքում՝ պարտադիր
4	Ներկայացված կանխավճարի չափ	Նախքան հատուցումը ներկայացված կանխավճարի չափ՝ ՀՀ դրամ	առկայության դեպքում՝ պարտադիր
5	Փաստացի վճարված կանխավճարի չափ	Նախքան հատուցումը կատարված կանխավճարի չափ՝ ՀՀ դրամ	առկայության դեպքում՝ պարտադիր
6	Կանխավճար ստանալու ներկայացման ամսաթիվ	Նախքան հատուցումը ներկայացված կանխավճարի ամսաթիվ	առկայության դեպքում՝ պարտադիր
7	Փաստացի վճարված կանխավճարի ամսաթիվ	Նախքան հատուցումը կատարված կանխավճարի ամսաթիվ	առկայության դեպքում՝ պարտադիր
8	Վնասը գնահատող	Նշվում է վնասը գնահատող կազմակերպության անվանումը կամ անձի անունը: Անձնական վնասի դեպքում նշվում է բժշկական հաստատության անվանումը (բժշկի անունը), մահվան դեպքում՝ նաև մահվան հետևանքով վնասի հատուցման իրավունք ունեցող անձանց կրած վնասը գնահատող կազմակերպության անվանումը կամ անձի անունը:	պարտադիր
9	Վնասի չափն ըստ տեսակների	Լրացվում է վնասի չափն ըստ ստորև նշված տեսակների՝ ՀՀ դրամ	պարտադիր
ա.	Անձնական վնաս		
աա.	*ամբուլատոր առաջնային բուժօգնություն*		
աբ.	*հիվանդանոցային բուժօգնություն*		
	որից՝		
աբ1)	*մետաղական կոնստրուկցիաների կիրառում*		
աբ2)	*վճարովի հիվանդասենյակ*		
ագ.	*ամբուլատոր-ռեաբիլիտացիոն բուժօգնություն*		
	որից՝		
ագ1	*վերականգնողական միջոցառումներ*		
ագ2	*դեղորայքի ծեռքբերում*		

ագ3	*մասնագիտացված տնային խնամք*		
ագ4	*ախտորոշիչ-ամբուլատոր միջոցառումներ*		
ագ5	*սանատոր-կուրորտային բուժում*		
ագ6	*անվասայլակի ձեռքբերում*		
ագ7)	*տեխնիկական այլ միջոցների և բուժ. պարագաների ձեռքբերում*		
ագ8	*պրոթեզավորում*		
ադ.	*առողջությանը պատճառված վնասի հետևանքով կորցրած աշխատավարձ (եկամուտ)*		
ադ1	*ժամանակավոր անաշխատունակություն*		
ադ2	*մշտական անաշխատունակություն*		
աե.	*մահ*		
աե1	*հուղարկավորության հետ կապված ծախսեր*		
աե2	*կերակրողին կորցնելու հետ կապված ծախսեր*		
ագ.	*այլ*		
ագ1	*ամբուլատոր առաջնային բուժօգնություն*		
ագ2	*հիվանդանոցային բուժօգնություն*		
բ.	Գույքին պատճառված վնաս		
բա.	ՏՄ-ի (այդ թվում՝ ՏՄ-ի մասերի և ՏՄ-ում տեղադրված տեխնիկայի) վնաս, որից՝	Լրացվում է ՏՄ-ի վնասի և նրա առանձին տեսակների գծով հաշվարկված վնասի չափը: Հնարավոր է մի քանի տարբերակների համակցում հետևյալ կերպ՝ ա և գ, ա և դ, բ և գ, բ և դ:	պարտադիր
բբ.	այլ գույքային վնաս, որից՝	Լրացվում է գույքային վնասի և նրա առանձին տեսակների գծով հաշվարկված վնասի չափը	պարտադիր
բբ1	*այլ գույքին հասցված վնաս*		
բբ2	*ճանապարհին հասցված վնաս (այդ թվում՝ երթևեկության նշաններին, լուսանշաններին, սյուներին)*		
բբ3	*շինություններին հասցված վնաս*		
10	Հատուցման եղանակ	Լրացվում է հատուցման եղանակը	պարտադիր
ա.	*միանվագ*		
բ.	*պարբերական*		
11	Հատուցման ձև	Լրացվում է հատուցման ձևը	պարտադիր
ա.	*կամխիկ*		
բ.	*անկանխիկ*		
12	*Հատուցման վճարի ամսական չափը*	Լրացվում է 10-ի բ՝ պարբերական վճարման դեպքում	պարտադիր
13	Հատուցման կարգավիճակ	Լրացվում է հատուցման կարգավիճակը: Եթե ընդհանուր պատահարում կարգավորված է, օրինակ, միայն գույքայինը, իսկ անձնականը որ լրիվ է կարգավորված, ապա լրացվում է մասնակի կարգավորված:	պարտադիր
ա.	*Մասնակի կարգավորված*		
բ.	*Լրիվ կարգավորված և փակված*		
գ.	*Վերաբացված*		
14	*Փաստաթղթի համար*	Նշվում է գնահատման եզրակացության փաստաթղթի համարը, անձնական վնասների դեպքում (բացառությամբ մահվան դեպքերի)՝ բժշկական եզրակացության համարը	պարտադիր

Հավելված 2
«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության տեղեկատվական համակարգ ներկայացվող տվյալների կազմը, ներկայացման ձևը, ժամկետները և տեղեկատվական համակարգի օգտագործման կարգը» հավելվածի

ՑԱՆԿ

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՑ ԵԼՔԱԳՐՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ

Ձև 1
ԱՊՊԱ տեղեկատվական համակարգի կողմից տրամադրվող ելքային տեղեկատվություն հաճախորդի վերաբերյալ (ստանդարտ)

1. Փաստաթղթի գլխագիր

1	Ապահովագրական ընկերության կոդ	
2	Մասնաճյուղի կոդ	
3	Ռեգիստրի կոդ	
4	Հարցվող փաստաթղթի տեսակ	
5	Պատասխան ուղարկելու ամսաթիվ	
6	Պատասխան ուղարկելու ժամ	
7	Հարցվող ֆայլի անվանում	

2. Հայտի ունիկալ համար

1	Ուղարկված հայտի չկրկնվող համար	

3. Հարցման ժամանակահատված

1	Հարցման ժամանակահատվածի սկիզբ	
2	Հարցման ժամանակահատվածի վերջ	

4. Ընդհանուր տվյալներ հաճախորդի վերաբերյալ

1	Հաճախորդի իրավական կարգավիճակ (ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, Հայաստանի Հանրապետություն, համայնք, օտարերկրյա պետություն, միջազգային կազմակերպություն)	
1)	Ֆիզիկական անձ	
ա.	*Անձը հաստատող փաստաթղթի համար*	
բ.	*Սոցիալական քարտի համար (առկայության դեպքում)*	
գ.	*Անուն*	
դ.	*Ազգանուն*	
ե.	*Հայրանուն*	
զ.	*Ծննդյան ամսաթիվ*	
2)	Իրավաբանական անձ	
ա.	*ՀՎՀՀ*	
բ.	*Պետական գրանցման վկայականի համար*	
